ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/35

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Հ. Քոյլոյանի և Հայկ Ղազարյանի (լիազորագիր՝ տրված 3 տարի ժամկետով),

ՀՀ վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչներ Ս. Մուշեղյանի և Կ.Ազիզյանի (լիազորագիր՝ տրված մինչև 30.12.2021թ.)

քննելով ՀՀ վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում միջոցառումների հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի կողմից 31.05.2021թ. ներկայացված (31.05.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 31.05.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1. *բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.*

1.1. ՀՀ Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը իր կարիքների համար «քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում միջոցառումների հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարել է թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/26» ծածկագրով գնանշման հարցումը (այսուհետ նաև Գնման ընթացակարգ).

1.2. Գնման ընթացակարգի շրջանակում մասնակցության հայտ են ներկայացրել նաև «ԱՌԹԱ» ՍՊ ընկերությունը և «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊ ընկերությունը: Գնման ընթացակարգի շրջանակում ընտրված մասնակից է ճանաչվել «ԱՌԹԱ» ՍՊ ընկերությունը:

1.3. «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության հայտը չի բավարարում հրավերի պահանջներին և այն՝ այդ թվում գնային առաջարկը, ստորագրված է «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության կողմից համապատասխան լիազորություն չունեցող անձի կողմից:

1.4. Չստորագրված գնային առաջարկում ներկայացված հայտը ենթակա է մերժման:

1.5. «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊ ընկերությունը Գնման ընթացակարգի շրջանակում զբաղեցրել է երկրորդ տեղը և «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության հայտի մերժման դեպքում պետք է ճանաչվի ընտրված մասնակից:

2. *բողոքի փաստական և իրավական հիմնավորումները.*

Գնումների մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառիրը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի

կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Նույն օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գնման ընթացակարգի հրավերի 4.3. կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված գնային առաջարկը: Նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ Պատվիրատուն՝ ի թիվս այլնի, հրավերով սահմանում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված գնային առաջարկը: Օրենսդիրը իր կողմից սահմանել է նաև գնային առաջարկի հաստատման հնարավորություն լիազորված անձի կողմից: Այսինքն գնման ընթացակարգի շրջանակում ներկայացվող գնային առաջարկը՝ ի թիվս այլնի, պետք է հաստատվի մասնակցի կամ համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից: Ընդ որում նման պայմանի չպահպանումը հանգեցնում է հայտի ոչ բավարար գնահատմանը և մերժմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Նշված նորմի վերլուծությունը փաստում է, որ այն բոլոր դեպքերում երբ իրավաբանական անձի կողմից հանդես է գալիս օրենքով և կանոնադրությամբ լիազորություններով չօժտված անձ, ապա նա պետք է ունենա իրավաբանական անձի ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ հաստատված լիազորագիր: Ըստ Էդուարդ Աղայանի բացատրական բառարանի «ստորագրություն» է՝ անուն ազգանվան կամ դրանց կրճատումով կազմվող տառերի յուրահատուկ գրային-գծագրական ինքնագիրը, անուն-ազգանուն կամ կեղծանունը, որը մեկը դնում է իր գրածների տակ: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ «ստորագրություն» է համարվում որևէ բանի տակ սեփական ձեռքով գրված անուն-ազգանունը: Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարելի է փաստել, որ ստորագրությունը դա

անձի անվան, մականվան կամ այլ բառերի, նշանների ձեռագիր է (ինքնագիր), որի միջոցով տվյալ անձը հաստատում է իր ինքությունը, միաժամանակ այլ անձանց հնարավորություն է ընձեռնում նույնականացնել ստորագրողի անձը: Մինչդեռ լիազորողի ստորագրության արտատպումը չի կարող համարվել լիազորագիրը լիազորողի կողմից ստորագրված լինելու հանգամանքը (նման իրավական դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵՄԴ/2035/02/15 քաղաքացիական գործով 15.05.2220 թվականին կայացրած որոշմամբ):

Սույն դեպքում թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման հարցման հրավերում առկա է այն դրույթը, որ մասնակիցը պետք է ներկայացնի իր կողմից հաստատված գնային առաջարկը, նույն գնային առաջարկը կարող է հաստատվել (ստորագրվել) համապատասխան լիազորություններ ունեցող անձի կողմից: Իրավաբանական անձի կողմից տրված լիազորագիրը պետք է ստորագրված լինի ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ, որը վերոհիշյալի և վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման լույսի ներքո պետք է ստորագրված լինի ձեռագիր, այլ ոչ թե արտատպված: Մինչդեռ սույն դեպքում «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության գնային առաջարկը ստորագրվել է Սեյրան Բալասանյանի կողմից, ով չուներ համապատասխան լիազորություններ, քանզի ներկայացված լիազորագրում ստորագրության հատվածը արտատպված է, որը ակնհայտ է նույնիսկ PDF ֆայլի ուսումնասիրությունից, նախ ստորագրության հատվածը առանձին կտոր է, որը արհեստական միջամտությամբ է ավելացվել, և նույնիսկ տառատեսակն է տարբեր: Պայմանավորված վերոգրյալով գտնում ենք, որ Սեյրան Բալասանյանը չունի «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության հայտը՝ այդ թվում, գնային առաջարկը ստորագրելու լիազորություն և ավելին այն ներկայացնելու լիազորություն, ուստի պետք է փաստել այն մասին, որ «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության հայտը՝ այդ թվում, գնային առաջարկը ստորագրված չէ և չի համապատասխանում գնային առաջարկին, որով պայմանավորված ենթակա է մերժման:

3. *Բողոքի պահանջը.*

Առաջնորդվելով վերոգրյալով և ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով խնդրում եմ՝

Պարտավորեցնել թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին փոփոխելու 21.05.2021 թվականին կայացված թիվ 03 արձանագրային

որոշումը՝ կայացնելու «ԱՌԹԱ» ընկերության հայտը մերժելու և «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու որոշումներ»:

Ընկերությունը բողոքի քննության շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել հետևյալ միջնորդությունները.

«Միջնորդություն 1

«Ներկայացված բողոքի փաստական տվյալներում է ներառված այն հանգամանքը, որ «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության գնային առաջարկը ստորագրվել է Սեյրան Բալասանյանի կողմից, ով չուներ համապատասխան լիազորություններ, քանզի ներկայացված լիազորագրում ստորագրության հատվածը արտատպված է, որը ակնհայտ է նույնիսկ PDF ֆայլի ուսումնասիրությունից, նախ ստորագրության հատվածը առանձին կտոր է, որը արհեստական միջամտությամբ է ավելացվել, և նույնիսկ տառատեսակն է տարբեր: Իհարկե նշված հանգամանքը, ապացուցվում է նաև անզնեն աչքով կատարված ուսումնասիրությամբ, սակայն այն իր հերթին պարզաբանման է ենթակա հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող անձի կողմից: Մասնավորպես պարզաբանման է ենթակա հետևյալ հարցադրումները՝

1. թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման շրջանակում էլեկտրոնային եղանակով ներկայացված տարբերակում՝ «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության կողմից տրված լիազորագրում առկա ստորագրությունը կատարվել է ձեռագիր տնօրենի կողմից, իսկ կնիքը դրվել նույն փաստաթղթի վրա, թե՝ «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության տնօրենի ստորագրությունը և կնիքը արտատպված են այլ փաստաթղթից արհեստական միջամտության արդյունքում:

2. թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման հարցման շրջանակում էլեկտրոնային եղանակով ներկայացված տարբերակում՝ «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության կողմից տրված լիազորագրի էլեկտրոնային տարբերակը սկանավորվել է արդյոք, որպես մեկ փաստաթուղթ, թե այն երկու փաստաթղթերի արհեստական միավորման արդյունք է:

Առաջնորդվելով վերոգրյալով և ղեկավարվելով ֆինանսների նախարարի 06.12.2018 թվականի թիվ 600-Ն հրամանով հաստատված գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության հետ կապված կարգի 17-րդ կետով միջնորդում եմ վերոհիշյալ հարցադրումների պարզաբանման նպատակով նշանակել փորձաքննություն, փորձաքննությունը հանձնարարել «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ փորձաքննության հետ կապված ծախսերը նախապես կկատարվեն «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊ ընկերության կողմից, իսկ դրանց փոխհատուցման հարցին կկատարվի անդրադարձ հետագայում:

Միջնորդություն 2

Թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման հարցման շրջանակում ներկայացված բողոքը առնչվում է «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության շահերին, անմիջականորեն վիճարկվում է նրա կողմից տրված լիազորությունները, բացի այդ ուսումնասիրման առարկա պետք է դառնա նաև նրա կողմից տրված լիազորագիրը, եթե առկա է:

Հաշվի առնելով նշվածը գտնում եմ, որ սույն գործով անհրաժեշտ է ներգրավվել նաև «ԱՌԹԱ» ՍՊ ընկերությանը»:

Միջնորդություն 3

Թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման հարցման շրջանակում ներկայացված բողոքի շրջանակում վիճարկման առարկա է հանդիսանում այն հանգամանքը, որ «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը ստորագրված չէ համապատասխան լիազորություններ ունեցող անձի կողմից: Ստորագրող անձի լիազորությունների բացահայտման կամ հերքման նպատակով խնդրում եմ պահանջել «ԱՌԹԱ» ՍՊ ընկերությունից կամ ՀՀ Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակից ներկայացնելու «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության կողմից գնային առաջարկը ստորագրած անձին տրված լիազորագրի բնօրինակը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 բողոքի քննության նպատակով 03.06.2021թ. ժամը 09:20-ին և 08.06.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր ներկայացրել են միջորդությունները և պնդել բողոքը:

2. <u>ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 բողոքի շրջանակներում ներկայացվել է բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և հետևյալ գրավոր դիրքորոշումը.

«Ձեր ս.թ. մայիսի 31-ի թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/8616-2021 գրությամբ ներկայացված բողոքի (այսուհետ՝ Բողոք) վերաբերյալ վարչապետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) հայտնում է հետևյալ դիրքորոշումը.

Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կարիքների համար «Քայլ դեպի տուն» միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնանշման ընթացակարգ, որին, ի թիվս այլոց, հայտ են ներկայացրել «ԱՌԹԱ» ՍՊԸ-ն և «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 20.05.2021թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ընթացակարգի շրջանակներում ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը նվազագույնն էր՝ Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԱՌԹԱ» ՍՊԸ-ին:

«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ն 31.05.2021թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով պնդել է, որ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի գնային առաջարկը ստորագրվել է Սեյրան Բալասանյանի կողմից, որը չուներ համապատասխան լիազորություններ, քանի որ ներկայացված լիազորագրում ստորագրության հատվածը իբրև թե «արտատպված է», ինչն, ըստ բողոքաբերի, ակնհայտ է դառնում PDF ֆայլի ուսումնասիրությունից: Ըստ այդմ՝ Ընկերությունը եզրակացրել է, որ Սեյրան Բալասանյանը չունի «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի հայտը ստորագրելու լիազորություն, ուստիև նշված հայտը (այդ թվում նաև գնային առաջարկը) պատշաճ լիազորված անձի կողմից ստորագրված չէ և այդ հիմքով ենթակա է մերժման:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ (...) հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ

վերջինիս ***լիազորած անձը*** (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է ***նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:***

Հաշվի առնելով վերոգրյալը և համադրելով վերը նշված փաստական հանգամանքները և վկայակոչված իրավանորմերը՝ հայտնում ենք, որ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը կազմվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և ստորագրվել լիազորող անձի՝ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Առաքելյանի կողմից:

Ինչ վերաբերում է Բողոքով ներկայացված այն փաստարկին, որ լիազորագրի ստորագրության հատվածը իբրև թե «առանձին կտոր է», որն ավելացվել է արհեստական միջամտությամբ, ապա կարող ենք փաստել, որ ***տվյալ դեպքում Հանձնաժողովը պարտավոր չէր*** «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտը ենթարկելու տեխնիկական «փորձաքննությունների» և պարտավոր էր գնահատել այն՝ ելնելով հրավերով սահմանված պահանջներից, ինչը և արել է: Ըստ այդմ՝ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի ***հայտը մերժելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքեր Հանձնաժողովը չուներ,*** ուստիև բավարար գնահատելով ընկերության հայտը՝ վերջինս գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի 31.05.2021թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն անհիմն է և ամբողջովին ենթակա է մերժման»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 բողոքի քննության նպատակով 03.06.2021թ. ժամը 09:20-ին և 08.06.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3.<u>ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կարիքների համար «Քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում միջոցառումների հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ն և «ԱՌԹԱ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.05.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ԱՌԹԱ» ՍՊԸ-ն և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի 31.05.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ վարչապետի աշխատակազմի դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ եթե հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ), ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ), ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպես՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կարիքների համար «Քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում միջոցառումների հետ կապված ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտեր են ներկայացրել «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ն և «ԱՌԹԱ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.05.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ԱՌԹԱ» ՍՊԸ-ն և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Այսպիսով՝ անդրադառնալով ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 բողոքի քննության շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված թվով երեք միջնորդություններին, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննության նպատակով 08.06.2021թ. հրավիրված նիստի ընթացքում արձանագրել է հետևյալը.

«Բողոքաբերը միջնորդությամբ նշել է, որ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի գնային առաջարկը ստորագրվել է Սեյրան Բալասանյանի կողմից, ով չուներ համապատասխան լիազորություններ, քանզի ներկայացված լիազորագրում ստորագրության հատվածը արտատպված է, որը ակնհայտ է նույնիսկ PDF ֆայլի ուսումնասիրությունից, նախ ստորագրության հատվածը առանձին կտոր է, որը արհեստական միջամտությամբ է ավելացվել, և նույնիսկ տառատեսակն է տարբեր: Իհարկե նշված հանգամանքը, ապացուցվում է նաև անզնեն աչքով կատարված ուսումնասիրությամբ, սակայն այն իր հերթին պարզաբանման է ենթակա հատուկ մասնագիտական գիտելիքներ ունեցող անձի կողմից:

Եվ խնդրել է փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

1. թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման շրջանակում էլեկտրոնային եղանակով ներկայացված տարբերակում՝ «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության կողմից տրված լիազորագրում առկա ստորագրությունը կատարվել է ձեռագիր տնօրենի կողմից, իսկ կնիքը դրվել նույն փաստաթղթի վրա, և «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության տնօրենի ստորագրությունը և կնիքը արտատպված են այլ փաստաթղթից արհեստական միջամտության արդյունքում:

2. թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման հարցման շրջանակում էլեկտրոնային եղանակով ներկայացված տարբերակում՝ «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության կողմից տրված

լիազորագրի էլեկտրոնային տարբերակը սկանավորվել է արդյոք, որպես մեկ փաստաթուղթ, թե այն երկու փաստաթղթերի արհեստական միավորման արդյունք է:

Այսինքն՝ միջնորդության բովանդակությունից հետևում է, որ փորձաքննություն նշանակելը նպատակ է հետապնդում պարզելու, թե արդյո՞ք լիազորագրում առկա ստորագրությունը և կնիքը արտատպված են, թե՝ ոչ:

Այս առումով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն արձանագրում է, որ փորձաքննություն նշանակվում է այն դեպքերում, երբ որևէ փաստ հաստատված համարելու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, տվյալ դեպքում գտնում եմ, որ միջորդությամբ բարձրացված հարցը պարզելու համար հատուկ մասնագիտական գիտելիքների անհրաժեշություն առկա չէ, հետևաբար միջնորդությունը փորձաքննություն նշանակելու մասին ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ՝ անդրադառնալով միջնորդությամբ ներկայացված խնդրին և հարցադրումներին և ուսումնասիրելով «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված լիազորագրի էլեկտրոնային տարբերակը՝ գտնում եմ, որ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում 19.05.2021թ. թիվ 21/04-1 լիազորագիրը չի կարող համարվել որպես պատշաճ ներկայացված փաստաթուղթ, քանի որ այն.

Որպես «լիազորագիր Ս. Բալասանյան» pdf անվանմամբ ֆայլ ստեղծված է երկու ֆայլերի համադրման միջոցով՝ տեքստային մասը (բացառությամբ ««ԱՌԹԱ» ՍՊԸ-ի տնօրեն, Արմեն Առաքելյան» տեքստի) առանձին ֆայլ է, ««ԱՌԹԱ» ՍՊԸ-ի տնօրեն, ստորագրություն և կնիք Արմեն Առաքելյան» մեկ այլ ֆայլ է, այսինքն՝ լիազորագիրը ստորագրված է արտատպման միջոցով՝ ինչն արձանագրում եմ, որ տվյալ դեպքում չի հանդիսանում էլեկտրոնային ստորագրության և նույնականացման օրենքով թույլատրված այլ միջոցների կիրառմամբ ստորագրված:

2. Անդրադառնալով 07.06.2021թ. ներկայացված միջնորդությանը, որով բողոքաբերը հայտնում է, որ թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման հարցման շրջանակում ներկայացված բողոքի շրջանակում վիճարկման առարկա է հանդիսանում այն հանգամանքը, որ «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը ստորագրված չէ համապատասխան լիազորություններ ունեցող անձի կողմից:

Եվ խնդրում է ստորագրող անձի լիազորությունների բացահայտման կամ հերքման նպատակով պահանջել «ԱՌԹԱ» ՍՊ ընկերությունից կամ ՀՀ Վարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակից

ներկայացնելու «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության կողմից գնային առաջարկը ստորագրած անձին տրված լիազորագրի բնօրինակը:

Սույն միջնորդության վերաբերյալ գտնում եմ, որ վիճարկվում է ոչ թե լիազորագրի առկայության փաստն առհասարակ, այլ ընդամենը «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» ընթացակարգի շրջանակներում «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված լիազորագրի իրավաչափությունը՝ դրա վրա առկա ստորագրության և կնիքի առումով, այս պայմաններում գտնում եմ, որ լիազորագրի բնօրինակը պահանջելու հիմքեր առկա չեն:

3. Անդրադառնալով որպես միջնորդություն վերտառությամբ ներկայացված փաստաթղթին՝ որով բողոքաբերը նշում է, որ թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման հարցման շրջանակում ներկայացված բողոքը առնչվում է «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության շահերին, անմիջականորեն վիճարկվում է նրա կողմից տրված լիազորությունները, բացի այդ ուսումնասիրման առարկա պետք է դառնա նաև նրա կողմից տրված լիազորագիրը, եթե առկա է:

Վերոգրյալի վերաբերյալ հայտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ միջորդությունը խնդրամաս չի պարունակում, այլ այն պարունակում է բողոքաբերի պնդումներն այն մասին, թե ինչ գործողություններ է անհրաժեշտ իրականացնել սույն գործի քննության շրջանակներում, այդուհանդերձ միջնորդության բովանդակությունից հետևում է, որ այն վերաբերում է «ԱՌԹԱ» ՍՊԸ-ին կողմ ներգրավելուն:

Ինչով և պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը «ԱՌԹԱ» ՍՊԸ-ին ներգրավել է որպես կողմ»:

Ընդ որում՝ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/35 բողոքի քննության նպատակով 08.06.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Ընկերությունը ներկայացված բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման հարցման հրավերում առկա է այն դրույթը, որ մասնակիցը պետք է ներկայացնի իր կողմից հաստատված գնային առաջարկը, նույն գնային առաջարկը կարող է հաստատվել (ստորագրվել) համապատասխան լիազորություններ ունեցող անձի կողմից: Իրավաբանական անձի կողմից տրված լիազորագիրը պետք է ստորագրված լինի ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ, որը վերոհիշյալի և

վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման լույսի ներքո պետք է ստորագրված լինի ձեռագիր, այլ ոչ թե արտատպված: Մինչդեռ սույն դեպքում «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության գնային առաջարկը ստորագրվել է Սեյրան Բալասանյանի կողմից, ով չուներ համապատասխան լիազորություններ, քանզի ներկայացված լիազորագրում ստորագրության հատվածը արտատպված է, որը ակնհայտ է նույնիսկ PDF ֆայլի ուսումնասիրությունից, նախ ստորագրության հատվածը առանձին կտոր է, որը արհեստական միջամտությամբ է ավելացվել, և նույնիսկ տառատեսակն է տարբեր: Պայմանավորված վերոգրյալով գտնում ենք, որ Սեյրան Բալասանյանը չունի «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության հայտը՝ այդ թվում, գնային առաջարկը ստորագրելու լիազորություն և ավելին այն ներկայացնելու լիազորություն, ուստի պետք է փաստել այն մասին, որ «ԱՌԹԱ» ՍՊ ընկերության հայտը՝ այդ թվում, գնային առաջարկը ստորագրված չէ և չի համապատասխանում գնային առաջարկին, որով պայմանավորված ենթակա է մերժման»:

Այսպիսով, վերը նշված փաստերով պայմանավորված, ինչպես նաև ուսումնասիրելով գործով առկա նյութերը՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու՝ Օրենսգիրք) 289-րդ հոդվածի համաձայն՝ ***գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն,*** փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

Օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ օրենքին, այլ իրավական ակտերին կամ կողմերի համաձայնությանը համապատասխան ***միակողմ գործարք կնքելու համար անհրաժեշտ և բավարար է մեկ կողմի կամքի արտահայտությունը:***

Օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից <u>լիազորագրի (...) վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում անմիջականորեն ներկայացվողի համար</u>*** <u>(...):</u>

Օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար (...):***

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***<u>իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:</u>***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ պարտավորական իրավահարաբերություններն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կապված են որոշակի գործողություններ կատարելու կամ դրանց կատարումից ձեռնպահ մնալու հետ:

Պարտավորական հարաբերությունների առաջացման հիմք են հանդիսանում նաև միակողմ գործարքները, որոնց միջոցով քաղաքացիական իրավունքի սուբյեկտը միակողմանի կամահայտնությամբ տնօրինում է իր սուբյեկտիվ իրավունքը կամ ստանձնում է սուբյեկտիվ պարտականություն՝ դրանով իսկ պարտավորական հարաբերության մյուս կողմին օժտելով համապատասխան սուբյեկտիվ իրավունքով:

Պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք է հանդիսանում նաև լիազորագիրը, քանի որ այն միակողմ գործարք է, որը <u>իրավաբանական անձի անունից տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ ներկայացուցչին և</u> պարտավորեցնում է գործել դրանում սահմանված լիազորությունների շրջանակում:

Այսպիսով՝ Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ եթե հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը, ***<u>ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:</u>***

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված՝ ***<u>մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է</u>*** դրանք ներկայացնող անձը կամ ***<u>վերջինիս լիազորված անձը</u>*** (այսուհետ՝ գործակալ), ***<u>ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:</u>***

Վերը նշված կարգավորումները ցույց են տալիս, որ եթե գնման գործընթացին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր, որը իրավաբանական անձի անունից տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում՝ ***հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը***, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում ***իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ***, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար:*** Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է...:

Այսպես՝ ***Կարգի 41-րդ կետը հստակ սահմանում է, որ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները՝ հրավերի պահանջների նկատմամբ, ենթակա են շտկման, միաժամանակ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանվում է շտկման անթույլատրելիություն միայն գնային առաջարկի մասով, այսինքն՝ մնացած բոլոր դեպքերում՝ այդ թվում նաև լիազորագրի դեպքում, կիրառելի է Կարգի 41-րդ կետով նախատեսված շտկման պահանջը:***

Սույն գործի փաստերի համաձայն՝ ուսումնասիրելով «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված լիազորագիրը և համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված լիազորագիրը չի կարող համարվել որպես պատշաճ ներկայացված փաստաթուղթ, ուստի, այն Կարգի 41-րդ կետի համաձայն, ենթակա է շտկման:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի բողոքն, որի համաձայն վերջինս խնդրել էր Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին պարտավորեցնել թիվ «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-21/28» գնանշման հարցման գնահատող

հանձնաժողովին փոփոխելու 21.05.2021 թվականին կայացված թիվ 03 արձանագրային որոշումը՝ կայացնելու «ԱՌԹԱ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և «ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու որոշումներ, ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ԳԵՎՈՐԳԻԱՆ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ի կողմից 31.05.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**